ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ - ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

ՄԻՀՐԱՆ ՏԱՄԱՏՅԱՆԻ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Բանալի բառեր - ազգային-ազատագրական պայքար, հրապարակախոսություն, կուսակցություն, Հայկական հարց, գաղթաշխարհ, դիրքորոշում, Ազգային պատվիրակություն, պատերազմ:

XIX դարի վերջին և XX դարի սկզբին հայ ժողովրդի գերխնդիրը թուրքական տիրապետությունից ազատագրվելն էր: Ոչինչ չխնայելով այդ շրջանի հեղափոխական սերունդը պայքարի դաշտ նետվեց հիմնախնդիրը լուծելու: Հերոսական այդ փաղանգի ներկայացուցիչներից մեկը հասարակական-քաղաքական և կուսակցական գործիչ, գրող, թարգմանիչ, մանկավարժ Միհրան Տամատյանն (1863-1945) էր, ով իր ողջ գիտակցական կյանքն անմնացորդ նվիրաբերեց թուրքական բռնության ճիրաններից սեփական ժողովրդին ազատելու վեհ գործին:

Առաջին համաշխարհային պատերազմի և հատկապես հայոց եղեռնի ու տեղահանության տարիներին Եգիպտահայ գաղութում ավելի քան երբեք, **կարևորվել է մամուլի դերը:** Պատերազմական իրադարձությունները լուսաբանելու, հայ կամավորական ջոկատների հաջողություններին արձագանքելու, հայությանը հայրենիքի ազատագրման պայքարի շուրջ համախմբելու նպատակով ժողովրդի ճակատագրով մտահոգ եգիպտահայ ռամկավար մտավորականները (նախաձեռնության հեղինակներից մեկը Մ. Տամատյանն էր) 1915 թ. մայիսի 11-ից Ալեքսանդրիա քաղաքում լույս ընծայեցին «Ազգային շահերու օրգան» հասարակական, քաղաքական «Արեւ» թերթը: Արտոնատերը Լևոն Մկրտչյանն էր, խմբագիրը՝ Վահան Թեքեյանը:

Ողջ գիտակցական կյանքը հայ ժողովրդի ազատագրությանը նվիրաբերած Մ. Տամատյանը մեծ թվով հոդվածներ է հրապարակել «Արեւ» թերթում: Դրանցում քննարկել է հայ **ժողովրդի ազատագրության հիմնախնդիրը** և բազմակողմանի իրատեսական լուծումներ առաջարկել: Հայկական հարցը բնութագրելով փշոտ, դրա ամենաբարդ բաղադրիչներից մեկը Մ. Տամատյանը համարում է Կիլիկիայի խնդիրը: Իսկ հարցի «լաւա-

գոյն լուծումը՝ բոլոր հայաբնակ վայրերուն (Հայաստան և Կիլիկիա) միացումը իբրև մէկ ամբողջութիւն ինքնավար ռէժիմով մը»[1]: Սակայն հոդվածագրի կարծիքով եթե Հայաստանում գլխավորապես Ռուսաստանի շահերն են գերակշռում, ապա Կիլիկիյում <<զանազան պետութեանց շահերը իրարու կը բաղխին>>[2]:

Ռուսաստանը, որ երկար ժամանակ ձգտում էր դեպի հարավ, դեպի տաք ջրեր, հոդվածագրի կարծիքով փորձում էր դա անել Հայաստանի վրայով, հետևաբար «ան դադրած չըլլայ շահագրգռուելիէ Կիլիկիոյ հարցով, ուր կը բնակին 400,000ի մօտ Հայեր»[3]: Մեծ տերություններից Ֆրանսիան էլ երկար տարիներ «աշխատած է Կիլիկիոյ մէջ իր ազդեցութեան տարածումին»[4] և ցանկացել է Սիրիական իր երկաթգիծը միացնել Հայաստանում կառուցվելիք երկաթուղիներին: Իսկ Անգլիան, հույս ուներ, որ Գերմանիայի ջախջախումից հետո տեր դառնալ Բաղդադի երկաթուղուն, ուստի «անտարբեր չի կրնար նայիլ Կիլիկիոյ վրայ»[5]: Այնպես որ, եզրակացնում է հոդվածագիրը, Եռյակ դաշինքի երկրների և Իտալիայի շահերը բախվում էին **Կիլիկիայում** և նրանք պիտի անեին ամեն ինչ իրենց հակընդեմ շահերը հաշտեցնելու համար: Դրա միակ միջոցը հոդվածագրի կարծիքով Կիլիկիայում «հակամրցող պետութեանց ո՛չ մէկուն պատկանելով հանդերձ՝ հաստատ դաշնագրով մը անոնց ամենուն երաշխաւորութեան տակ ըլլալն է»[6]: Հետևապես, նշում է Մ. Տամատյանը, մեծ տերությունները պիտի Կիլիկիային օժտեն լայն ինքնավարությամբ, որը դեպի անկախություն տանող առաջին քայլը կլինի: Քանի որ «Կիլիկիոյ միակ կենսունակ ու բնիկ միակ համասեռ ու միաձոյլ ժողովուրդը, երկրին շարժիչ ուժ» հայերն էին, որոնք՝ իրենց ազգային, մշակութային և քաղաքակրթական ընդունակությունները ազատ և անարգել կերպով մշակելու և զարգացնելու դեպքում կկարողանային իրենց «ներքին գործերը իրենց ձեռքով վարել»[7]:

Մ. Տամատյանը նաև ցավով գրում է, որ Կիլիկիայում տեղի էին ունենում «եղերական և դիւցազնական եղելութիւններ» և առկա է խիստ վտանգավոր կացություն[8]: Եվ եթե Կովկասյան ճակատում հայերը «իրենց կռնակն ունին ռուսական քաջայաղթ բանակը, Հայ կամաւորներու գունդերը», ապա Կիլիկիայի հայերը, «արտաքին յարաբերութենէ կտրուած,

[1] Տե՛ս «Արև» թերթ, 26 մայիսի, 1915, թիվ 8:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Տե՛ս նույն տեղում:
[4] Տե՛ս նույն տեղում:
[5] Տե՛ս նույն տեղում:
[6] Տե՛ս «Արեւ» թերթ, 28 մայիսի, 1915, թիվ 98:
[7] Տե՛ս նույն տեղում:
[8] Տե՛ս «Արեւ» թերթ, 14 հունիսի, 1915, թիվ 16:

զուրկ են նիւթական ու բարոյական ամէն աջակցութենէն»[1]: Արդյո՞ք պիտի թույլ տրվի, որ Կիլիկիան մարդկային սպանդանոց դառնա: Դաշնակից պետությունները, որոնք իրենց հայտարարել էին արևմտահայերի պաշտպան, արդյոք պիտի թույլ տան, որ Ադանան կրկնվի և թուրքերն անարգել ի կատար ածեն իրենց բնաջնջման գործը, հարց է հնչեցնում հոդվածագիրը և ինքն էլ փորձում պատասխանել: Ժամանա՛կն է որ բարձրագոչ արձագանք տրվի այդ ձայնին. ժամանա՛կն է որ «Հայությունը հովանաւորող Անգլիոյ, Ֆրանսայի և Ռուսիոյ ուշադրութիւնը դարձնենք Կիլիկեան մեծ վտանգին վրայ», քանի որ, գրում է հոդվածագիրը, կարծել թե թուրքերը հետ կկանգնեն իրենց որդեգրած բնաջնջման քաղաքականությունից, «աններելի միամտութիւն մը պիտի ըլլայ. Կիլիկիոյ Հայութեան ևս մահավճիռը տրուած է և ան անպայման պիտի գործադրուի»[2]: Ուստի հարկավոր է ճիշտ ըմբռնել կիլիկիահայության դերակատարությունը և հորդորել դաշնակից պետություններին նրա նկատմամբ դրսևորեն «նոյն վեհանձն վերաբերումը որպիսին Ռուսաստանը ցոյց տուաւ Հայաստանին»[3]:

Ձանալով նպաստել մեծ տերությունների կողմից հայության հանդեպ դրական վերաբերմունք ստեղծելու ազգաշահ գործին Մ. Տամատյանը «Պետութեան գաղափարը Անգլացւոյ և Գերմանացւոյ մէջ» հոդվածում փորձում է ցույց տալ այն խորունկ համակրանքի պատճառները, «զոր Հայերս միշտ տածած ենք դէպ ի Դաշնակից Պետութիւնները»[4]: Հոդվածագիրը սխալ է համարում այն կարծիքը, թե հայերը վերջիններին համակրում են լոկ այն պատճառով, որ թուրքական բռնապետությունից իրենց ազատագրումը նրանցից են սպասում: Ապա բացատրում է, որ հայերի ազգային մշակույթը, հասարակական իդեալներն ու քաղաքական ըմբռնումների համանմանությունն է պատճառը՝ մասնավորապես ֆրանսիականի և անգլիականի հետ, որ «Արեւելքի ամենէն ազատամիտ և ռամկավարական» հայերի համար նրանց այդ թեզերը «եղած են ու կը մնան միշտ մեր բնատոհմիկ աւանդութիւններու և մեր ինքնատիպ ռամկավարական հակումներու հիմքում»[5]:

Այնուհետև Մ. Տամատյանը բացատրում է, որ պետությունը գերմանացու ըմբռնումով «կը նշանակէ տիրապետութիւն»[6]: Իսկ անգլիական ըմբռնումով՝ «քաղաքական սիստէմ մը որ ողջ երկրագնդիս վրայ կը տարածէ և իրարմէ բոլորովին տարբեր ցեղէ, գոյնէ ու քաղաքակրթութենէ

[1] Տե՛ս նույն տեղում:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Տե՛ս նույն տեղում:
[4] Տե՛ս «Արև» թերթ, 5 հուլիսի, 1915, թիվ 25:
[5] Տե՛ս նույն տեղում:
[6] Տե՛ս նույն տեղում:

կազմուած ժողովուրդներուն կը պարգեւէ խաղաղութիւն և ազատութիւն»[1]: Որ Բրիտանական կայսրության նշանաբանը ո՛չ թէ այլ ժողովուրդների նկատմամբ տիրապետություն հաստատելն է, այլ նրանց ազատություն շնորհելը, որը մեր կածիքով այնքան էլ իրականությանը չի համապատասխանում: Իսկ հայերի նման «ի բնէ ազատասէր», սակայն դարեր շարունակ ճնշված ժողովուրդը, գրում է հոդվածի հեղինակը, չի կարող համակրանքի նշույլ անգամ ունենալ դեպի գերմանական «համայնակուլ տիրապետականութիւնը» և ամբողջ սրտով չհարել ազատականության օրրան Անգլիային, «ասպետականութեան, գաղափարապաշտութեան մեծ հայրենիք Ֆրանսային», և սրանց օրինակից հետզհետե «ներշնչուելու ընդունակ մեծ և ազատարար Ռուսաստանի»[2]:

Մ. Տամատյանը ցավով նշում է, որ Հայաստանի և Կիլիկիայի վրայ կրկին «շղթայազերծուած է սարսափի և արհաւիրքի աւերիչ փոթորիկ մը, որ ոչ միայն կը յիշեցնէ 1895-1896 կարմիր թուականները՝ այլև կը նսեմացնէ զանոնք»[3]: Պատմական էքսկուրս կատարելով հոդվածագիրը նշում է, որ հին թուրքերը հայ տարրին իր հայրենիքում տկարացնելու համար դիմում էին խաղաղ միջոցների և աչք էին փակում քրդերի մանրմունր հարստահարությունների վրա: Մյուս կողմից էլ մայրաքաղաքում ու այլ խոշոր քաղաքներում սիրաշահում էին հայերին ու հեռացնում հայրենի երկրից, կտրում արմատից և դրանով «կը ջանային հայկական խնդիրը իր խանձարուրքին մէջ խեղդել անձայն, անշշուկ»[4]: Սուլթան Համիդն էլ, շարունակում է հեղինակը, «Հայ վտանգի» դեմ որդեգրեց բուռն, վայրագ միջոցները: Քրդերին քաջալերեց, որ կողոպտեն ու սպանեն հայերին, իսկ պաշտոնյաներին հրամայեց հալածել, կեղեքել ու բանտարկել հայերին: Չբավարարվելով դրանով, «ձեռք առաւ խմբական ջարդերու քաղաքականութիւնը և 300.000 հայերու գրեթէ մէկ ամսուան շրջանին մէջ կոտորեց»[5]:

Երիտթուրքերն էլ դժոխային ծրագրով որոշեցին ավարտին հասցնել «հայկական բնաջնջումի գործը և 7 տարուան մէջ Հայոց դէմ գործած իրենց չարիքներովը նսեմացուցին նոյն իսկ Սուլթան Համիտը»[6]: Հայերին բնաջնջելու ավելի արմատական տեղահանություն միջոցի դիմեցին, որի ընթացքում դատարկվեցին հազարավոր հայաբնակ բնակավայրեր, իսկ հայրենազրկված անպաշտպան ժողովրդին քշեցին անապատները և անխնա կո-

[1] Տե՛ս նույն տեղում:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Տե՛ս «Արեւ» թերթ, 1 հուլիսի, 1915, թիվ 23:
[4] Տե՛ս նույն տեղում:
[5] Տե՛ս նույն տեղում:
[6] Տե՛ս նույն տեղում:

տորեցին: Այդ ամենին, գրում է Մ. Տամատյանը, «Գերմանացիք, անմասն չեն՝ սկսած Հայերու դէմ դժոխային ծրագիրներու յղացումէն ու գործադրութենէն վերջացուցած»[1]: Սակայն հույսը չկտրելով՝ նա գրում է. «Տակաւին ամէն բան կորած չէ և ոչ ալ ամէն միջոց սպառած՝ ազատելու գոնե Կիլիկիոյ մեր մնացեալ եղբայրները վերահաս անդարմանելի աղէտներէ»[2]:

Աշխարհում ընթացող բուռն իրադարձությունները և դրանց հնարավոր ազդեցությունը հայության ճակատագրի վրա ևս Մ. Տամատյանի ուշադրության կենտրոնում էին: Դրանցից մեկն էլ ընթացող համաշխարհային պատերազմում Իտալիայի մուտքն էր ընդդեմ Թուրքիայի: «Իտալօ-թուրք պատերազմը մեզ կը շահագրգռէ մասնաւորապէս հայկական տեսակէտով», գրում էր Մ. Տամատյանը, ապա պարզաբանում, որ Իտալիայի գործունեության համար «ընտրելիք հաւանական ռազմավայրն է որ մեզի համար վերջին աստիճան ուշագրաւ կը դարձնէ իտալօ-թուրք բախումը»[3]: Հոդվածագիրը ենթադրում է, որ դա լինելու է Կիլիկիան: Հետևապես ողջունում է այդ մուտքը, որը «կը փութացնէ» Թուրքիայի ջախջախումը, որից կախված է «Կիլիկիոյ հայ ազգաբնակութեանց փրկութիւնը բնաջնջումի վտանգէն»[4]:

Մ. Տամատյանը սրտի կսկիծով գրում է, որ Հայաստանը հրի ու սրի է մատնված և սերունդների փայփայած հույսերը կորչում են, որ «Հայութիւնը կը նաւաբեկի… Ազատութեան նաւահանգիստին մուտքին առջև»[5]: Իսկ արտասահմանի հայերը, անվրդով ապրում են և «Հայաստանի ամայութեան իբրև հակադրութիւն» կը ցուցադրեն իրենց սիրտերուն ամայութիւնը»[6]: Մոռանալով, որ իրենք ոչինչ են առանց հայրենիքի՝ ընդամենը՝ գնչուներ, կորսված ազգի անփառունակ մնացորդներ, քանի որ Հայաստանի հայերն են հայրենիքի իսկական տերն ու ավանդապահները: Մեր անտարբերությամբ, դիմելով գաղթօջախների հայերին գրում է Մ. Տամատյանը, պիտի թողնենք, որ նրանք իրենց վերջին շունչը փչե՞ն, որ հայրենիքն անդարձ կորսվի՞: Այդ դեպքում «ի՞նչ վճիռ պիտի արձակէ մեզի դէմ Պատմութիւնը»:

Ազգի ճակատագրով մտահոգ Մ. Տամատյանն արձագանքեց նաև զեյթունցիների ինքնապաշտպանությանը և մեծ ցավ ապրեց, որ նրանք «խաբուելով հայ բարձրաստիճան հոգևորականներու և Ֆախրի փաշայի ստապատիր խոստումներէն»[7] անձնատուր եղան: Իսկ ամենացավալին

[1] Տե՛ս նույն տեղում:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Տե՛ս «Արեւ» թերթ, 27 օգոստոսի, 1915, թիվ 48:
[4] Տե՛ս նույն տեղում:
[5] Տե՛ս «Արեւ» թերթ, 1 սեպտեմբերի, 1915, թիվ 50:
[6] Տե՛ս նույն տեղում:
[7] Տե՛ս «Արեւ» թերթ, 24 սեպտեմբերի, 1915, թիվ 60:

այն էր, որ Զեյթունից շատ հայեր արտագաղթեցին, իսկ նրանց տեղն զբաղեցրին ալբանացի գաղթականները, այն չափերով, որ քաղաքի անունն էլ փոխվեց՝ Սուլեյմանլի: Ցավոք, նշում է Մ. Տամատյանը, նույն տխուր պատկերը եղավ Հաճնում, Քեսաբում և մյուս վայրերում: Իսկ Անտիոքի թուրքերը փորձել էին ընդդիմանալ իրենց հարևան հայերի տարագրմանը, որին ի պատասխան երիտթուրքական կառավարությունը նրանց 60 պարագլուխներին ևս արժանացրել է հայերի բախտին:

Ներկայացնելով թուրքերի եղեռնագործությունները, «Ամէն յոյս կորած չէ» հոդվածում Մ. Տամատյանը նշում է, որ այդ ոճրագործություններն սկսել են «արձագանք գտնել քաղաքակիրթ մարդկութեան խղճին մէջ, և հանրային զայրոյթի ալիքը կը բարձրանայ այս ոճիրներուն դէմ»[1]: Իսկ լորդեր Քրոմերը և Բրայսը, իրենց կառավարությունից պահանջել են, որ հայերի նախճիրի մասին բոլոր պաշտոնական տեղեկությունները «ի սփիւռս աշխարհի հրապարակուին»[2]:

Հայկական դատն ըստ Մ. Տամատյանի լուծված վերջացած կլիներ, եթե թուրքերը չձեռնարկեին «Հայ տարրին բնաջնջումովը լուծել այդ հարցը»[3]: Այնպես որ, գրում է հեղինակը, Հայկական հարցը «հակոտնեայ երկու լուծումներու միջեւ կը տարուբերի՝ լիակատար բնաջնջում և լիակատար ազատութիւն»[4]: Անհրաժեշտ է մի կողմ թողնել ճղճիմ հաշիվները և աշխարհին ներկայանալ որպես միաձույլ ու համերաշխ քաղաքական կազմավորում, որ «հանդիսագրենք աշխարհին մեր իբրեւ ազգ գոյութիւնը և իբրեւ Հայաստանի ազատ քաղաքացիներ՝ թէ իսկ աւերակներու վրայ՝ մեր ապրելու կամքը պարտադրել աշխարհի հզօրներուն»[5]:

«Դաշնակիցները հայերուն հանդէպ» հրապարակման մեջ ևս Մ. Տամատյանը կարևոր հիմնախնդիր է բարձրացնում: Օսմանահպատակ հայերը՝ զգուշանալով թուրքերի մոլեռանդությունից «իրենց հպատակութեան անտեղիտալի պարտադրութիւնները կը կատարէին»[6]: Այն պահից սկսած, գրում է հեղինակը, երբ Թուրքիան մտավ պատերազմի մեջ, հայերի կացությունը «ծանրապէս վտանգուէց»: Գաղթօջախների հայությունը կանգնեց դաշնակիցների կողքին և «չի թերացաւ նրանց մատնանիշ ընելու» մի կողմից երկրաբնակ հայության գլխին կախված վտանգը և մյուս կողմից «հայոց իրենց ընծայելիք սատարը»[7]: Բայց դաշնակիցները շատ փոքր նկատեցին հայերի ներկայացրած «չնչին» առավելությունները: Իսկ

[1] Տե՛ս «Արեւ» թերթ, 29 հոկտեմբերի, 1915, թիվ 75:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Տե՛ս նույն տեղում:
[4] Տե՛ս նույն տեղում:
[5] Տե՛ս նույն տեղում:
[6] Տե՛ս «Արեւ» թերթ, 24 նոյեմբերի, 1915, թիվ 86:
[7] Տե՛ս նույն տեղում:

թուրքերը երբ հասկացան, որ դաշնակիցներ «բոլորովին տարբեր ծրագրով կը շարժէին», ռուսական առաջխաղացումը դանդաղ էր և անմիջական վտանգ չէր սպառնում, այդ ժամանակ միայն համարձակվեց ձեռնարկեցին իրենց հայաջինջ ծրագրի գործադրությունը:

Հայ տարրի պահպանումը նախ և առաջ անհրաժեշտ էր Օսմանյան կայսրությանը, պարզաբանում է Մ. Տամատյանը, քանի որ այդ պետությունում՝ զարգացած մարդիկ քիչ են, հանրային կարծիք գոյություն չունի և իշխանությունը միշտ «գտնուած է անձուկ և ապականեալ շրջանակի մը ձեռքին»[1]: Եվրոպական երկրներն ու կայսրության կազմում ապրող ո՛չ իսլամադավան ժողովուրդները ողջունեցին երիտթուրքերի հեղաշրջումը, քանի որ 1908-ի սահմանադրությունը դիտարկում էին իբրև արշալույս խավարից: Սակայն իրականում քրիստոնյա ժողովուրդները ցանկալին ընդունել էին իրականության փոխարեն և լավ չէին ըմբռնել, որ «պարզապէս քլիք (խմբակ) մըն էր որ ուրիշ քլիքի մը տեղը կ՛անցնէր»[2]: Թուրքիայի մահմեդական բնակչությունը հիմնականում տգետ էր, իսկ քրիստոնյաները, առավել հայերը՝ շատ ավելի զարգացած: Հենց դա էր նաև գլխավոր պատճառներից մեկը, թերևս՝ գլխավոր պատճառը, պարզաբանում էր Մ. Տամատյանը, որ, որ «հայ տարրը անմիջապէս վտանգաւոր տարր մը նկատուեցաւ» և այն սահմանադրությունը, որ դժբախտ հայ ժողովուրդը ողջունել էր, «իբրեւ արշալոյսը իր քաղաքական ազատագրութեան, անխուսափելիօրէն իր մահուան պատճառ դարձաւ»[3]:

Երբ բարենորոգումների հարցը խնդրո առարկա դարձավ, գրում է Մ. Տամատյանը, արևելքի մեջ հայերը դիվանագիտության խարդավանքների առաջին զոհերը եղան, իսկ Բեռլինի վեհաժողովը կատարելապես ճանաչեց այդ իրողությունը: Ռուսաստանի անդրկովկասյան քաղաքականությունն էլ խթանեց Թուրքիայի մահմեդականների մոլեռանդության զարթոնքը հայերի դեմ: Այնպես որ, նշում է հոդվածագիրը, Արևելյան հարցի սուր կերպարանք ստանալուց առաջ Հայաստանում ջարդերի մասին ոչ ոք չէր լսել: Իսկ քրիստոնյա Եվրոպան, ընդգծում է հոդվածագիրը, երբեք մատը մատին անգամ չխփեց այս դժբախտ ժողովրդին պաշտպանելու համար:

Ավելի անհեթեթ և հակաբնական գաղափար չկա, շարունակում է հեղինակը, «քան Հայերը ամբողջութեամբ որևէ երկիր մը գաղթեցնելով հայկական հարցը լուծելը»[4]: Հայերը, ի տարբերություն մյուսների, տարածաշրջանի միակ բնիկ ժողովուրդն են և նրանց զանգվածային արտագաղթը կա-

[1]Տե՛ս «Արեւ» թերթ, 10 հուլիսի, 1916, թիվ 26 (182):
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Տե՛ս նույն տեղում:
[4] Տե՛ս նույն տեղում:

րող է փրկել «շատ անհատներու կեանքը, բայց այդ պիտի վերջացնէր իբրև ազգ ողջ հայերու գոյութիւնը»[1]: Հայ տարրի պահպանումը Փոքր Ասիայիում անհրաժեշտ է ոչ միայն հայերի, այլև նույնիսկ թուրքերի բարեկեցության և բարգավաճման համար, քանի որ առանց հայերի օժանդակության թուրքերի գոյությունը որպես ինքնուրույն ազգի, անկարելի կլինի: Այս դեպքում, նշում է հեղինակը, հայկական կոտորածները հիշեցնում են «հինաւուրց առակը յիմար մարդուն, որ ոսկի հաւկիթ ածող հաւը սպաններ է»[2]:

Մ. Տամատյանը «Հայապաշտպան Քիւրտերը» հոդվածում նշում է, որ կոտորածների ընթացքում «Քիւրտեր բաւական թուով Հայեր պաշտպանած ու ազատած են»[3] և վկայակոչում է փրկված 10 հազար էրզրումցի հայերի օրինակը: Սակայն դա վերագրել ազգերի համերաշխությանը ամբողջապես սխալ է: Ավելին, ափսոսանքով գրում է Մ. Տամատյանը, շատ դեպքերում կիսավայրենի քրդերը ոչ միայն թուրքերի հանցակիցներն ու աջակիցները եղան, այլև շատ դեպքերում ընչաքաղցությունից ու վայրենի բնազդներից մղված՝ գերազանցեցին նրանց:

«Տխուր վիճակ» հոդվածում էլ Մ. Տամատյանը անդրադառնալով **գաղթականների խնդիրներին** նշում է, որ պետք չէ մոռանալ «խրամատներու մէջ կռուող, մեծափարթամ ընտանիքներու փափկասուն զաւակներին, որ իրենցմէ աւելի առատ և աւելի աղէկ չեն սնանիր»[4]: Գաղթականները չպետք է մոռնան նաև, որ Թուրքիայում մնացած հայերն ավելի դժոխային վիճակում են: Հետո էլ հարցի լուծմանը նպաստող ազդեցություն ապահովելու համար անհրաժեշտ է զուսպ լինել, որպեսզի հայերի մասին բարերար տպավորություն ու նպաստավոր կարծիք ստեղծվի:

Իր դիտարկումները և **«Խաղաղությունը կարելի՞ է»** հրապարակման մեջ[5] հնչեցրած հարցին և արձագանքելով ԱՄՆ-ի, Շվեյցարիայի և Շվեդիայի կողմից արված խաղաղության կոչին Մ. Տամատյանը նշում է, որ եթե որպես հաղթող Գերմանիան ցանկանում է դաշնակիցներին պարտադրել իր խաղաղությունը, ապա պարզ է, որ այդպիսի խաղաղության մասին խօսք անգամ չի կարող լինել: Քանի որ դաշնակիցները (Անտանտի երկրները) երբեք այնքան հզոր չէին, որքան տվյալ պահին: Առավել ևս, որ Գերմանիան եվրոպական քաղաքակրթությունը կասեցնելու ու նրա տնտեսական կյանքը խաթարելու նպատակով էր միայն հաշտություն առաջարկում: Հետո էլ, գրում է Մ. Տամատյանը, իբր Գերմանիան նպատակ ունի խաղաղության շնորհիվ փոքր ազգությունների համար մե-

[1] Տե՛ս նույն տեղում:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Տե՛ս «Արեւ» թերթ, 14 հուլիսի, 1916, թիվ 28 (184):
[4] Տե՛ս «Արև» թերթ, 11 սեպտեմբերի, 1916, թիվ 53 (209):
[5] Տե՛ս «Արև» թերթ, 27 դեկտեմբերի, 1916, թիվ 99 (255):

ծերին հավասար հարգանք ապահովել: Սակայն այդ նույն Գերմանիան էր, որի պաշտոնյաները տեղյակ էին, թե ինչ է կատարվելու և ինչ կատարվեց հայերի հետ: Թուրքերն էլ կհաստատեն, որ գերմանացիների հրամաններն են կատարել. «Սպայակոյտի պետը Գերմանացի էր. Ընդհ. Հրամանատարը Գերմանացի էր. և գերման սպաներ շատ էին բանակին մէջ: Ղուրանը չթոյլատրեր արարքներ որպիսիք կը գործադրուին այսօր Հայերու վրայ»[1]:

Կ. Պոլսում գտնվող գերմանական դեսպանատունն էլ իր հյուպատոսների միջոցով, լրագրերն էլ, տեղյակ էին, թե ինչ էր կատարվում հայերի հետ և իրենց լռությամբ եղեռնագործութեան մեղսակիցները հանդիսացան»[2]: Անկասկած, պատերազմի ավարտից հետո աշխարհում շատ նոր կարգեր պիտի հաստատվեն, գրում է Մ. Տամատյանը, ապա ավելացնում, որ պատերազմի «մեծ դասերէն մէկը կազմակերպութեան էական պէտքն ու կարեւորութիւնն է»[3]: Գերմանիան, որ պատերազմի սկզբում լուրջ հաջողություններ արձանագրեց, գրում է հեղինակը, բացատրվում էր այն կազմակերպական ոգով, որ այդ երկիրը հասցրել էր կատարելության: Ամբողջ Գերմանիան կազմակերպության մի վիթխարի մեքենա էր, որտեղ ոչինչ բախտի քմահաճույքով կամ պատահականություններով պայմանավորված չէին: Իսկ դաշնակից պետություններն էլ կարողացան պատերազմի ընթացքում կազմակերպել կատարելապես: Բնականաբար հաջողությունը սովորաբար ժպտում է այն ժողովուրդներին, որոնք գերազանցորեն կազմակերպվել գիտեն:

Մ. Տամատյանը գտնում էր նաև, որ Ազգային պատվիրակության վարկն ու հեղինակությունը բարձր պահելը խիստ անհրաժեշտ է, քանի որ թշնամիները ճգնում էին վերջնական հարված հասցնել հայերի պաշտոնապես ճանաչված քաղաքական մարմնին: Նա անժամանակ էր համարում պատվիրակության իրավասության հարցի քննարկումը[4], մերժում պատվիրակությունը միայն կաթողիկոսի ներկայացուցիչ համարելը և անհարկի քննադատությունները նրա հասցեին[5]: Հաճախ, գրում է Մ. Տամատյանը, թյուրիմացությունների տեղիք է տալիս պատվիրակության գաղտնապահությունը, որը տվյալ դեպքում խիստ անհրաժեշտ էր: Ազգային պատվիրակության նախագահը, նշում է Մ. Տամատյանը, ևս «ցաւ կը

[1] Տե՛ս «Արեւ» թերթ, 11 հունվարի, 1917, թիվ 105 (261):
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Տե՛ս «Արեւ» թերթ, 16 նոյեմբերի, 1917, թիվ 82 (392):
[4] Մ. Տամատյանը նկատի ունի ԶԼՄ-ներում Ազգային պատվիրակության ու դրա նախագահ Պողոս Նուբարի հասցեին հնչած քննադատական հրապարակումները և դրանց ի պատասխան «Արեւ» թերթում Վ. Թեքեյանի խմբագրականը, տե՛ս օրինակ՝ «Արեւ» թերթ, 30 օգոստոսի, 1918, թիվ 47 (513):
[5] Տե՛ս «Արեւ» թերթ, 6 սեպտեմբերի, 1918, թիվ 50 (516):

յայտնէր իր յառաջացած տարիքին և իր յոգնութեանց»[1]: Իսկ հայկական դատի քարոզչությանը զարկ տալու, համար հոդվածագրի կարծիքով անհրաժեշտ էր ազգային կենտրոնատեղի ունենալ:

Հայերի ճակատագրով մտահոգ Մ. Տամատյանը նաև ակնդետ հետևում էր միջազգային լրատվամիջոցներին և դրանցում եղած հայանպաստ նյութերը չնչին միջամտություններով ու բացատրություններով հրապարակում «Արեւում» (1919 թ. մայիս 2-ի «Թայմզ» թերթի խմբագրականը): Դրանցում շեշտվում էր, որ թուրքերը կոտորեցին հայերին, «ո՛չ որովհետև տկար էին, այլ վտանգաւոր թշնամիներ, որոնք կառչած մնացին իրենց կրօնքին և մերժեցին հաշտուիլ ստորադաս քաղաքակրթութեան մը հետ»[2]:

Աշխարհամարտի ավարտից տևական ժամանակ հետո էլ թուրքերը Կիլիկիայում շարունակում էին իրենց հակահայկական ոճրագործությունները: Այնտեղ ազգային պատվիրակության լիազոր ներկայացուցիչ Մ. Տամատյանը բոլոր միջոցներով փորձում էր տեղի քրիստոնյա և իսլամադավան ժողովուրդների համար խաղաղ գոյակցություն ապահովել: Սակայն օգտվելով Կիլիկիայի վերահսկողության երաշխավոր ֆրանսիական իշխանությունների հանցավոր անգործությունից, թուրքերը շարունակում էին իրենց անբարո պահվածքը: Համոզվելով, որ իրավիճակը շտկելու այլ ելք չկա, Մ. Տամատյանի ղեկավարությամբ ստեղծված կառույցը աննախադեպ քայլ ձեռնարկեց և հանդես եկավ Ֆրանսիայի հսկողության ներքո **Կիլիկիայի անկախության մասին** հատուկ հայտարարությամբ: «Արեւ» թերթն էլ առանց որևէ փոփոխության տպագրեց այդ հայտարարության տեքստը[3], որը կարևոր հանգրվան է հայոց պետականության վերստեղծման համար և ուսանելի շատ կողմեր ունի:

Իր կուսակցականացող առաջին սերնդակիցների հետ անդամագրվելով Հնչակյան կուսակցությանը Մ. Տամատյանը կրթամշակութային գործունեությամբ ձգտում էր հայությանը դուրս բերել դարավոր ընդարմացումից: Ավելի ուշ Օսմանյան կայսրության տիրապետության տակ հեծող Արևմտյան Հայաստանում սոցիալիզմի գաղափարախոսությունը ժամանակավրեպ համարելով՝ Ա. Արփիարյանի և մյուս համախոհների հետ 1898թ. հիմնեցին Վերակազմյալ հնչակյան կուսակցությունը: Բնականաբար, կուսակցական պայքարի առաջամարտիկը չէր կարող անտարբեր մնալ հայ իրականության մեջ գործող մյուս քաղաքական ուժերի գործունեությանը: Մասնավորապես հայ կուսակցությունների համագործակցության խնդրին նվիրված «Ավելի պարզ» հոդվածում[4] քննադատելով բո-

[1] Տե՛ս «Արև» թերթ, 9 սեպտեմբերի, 1918, թիվ 51 (517):
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Տե՛ս «Արև» թերթ, 20 օգոստոսի, 1919, թիվ 44 (804):
[4] Տե՛ս «Արև» թերթ, 4 հունիսի, 1915, թիվ 12:

լոր նրանց, ովքեր «կը ըսէն թէ ազգային գործունէութեան միակ բեմը Կովկասն է»[1] և կամավորական շարժումից բացի տվյալ պահին այլ ազգային անհրաժեշտ գործ չկա, Մ. Տամատյանը կոչ էր անում աչքաթող չանել նաև հայության մյուս մասերին:

Հոդվածագիրը նշում էր, որ թեև «ամէն մարդ հաւասարապէս իր պարտականութիւնը չի կատարէր»[2], բայց հայ ժողովուրդի մեջ. «հրաշափոխութիւն մը տեղի ունեցած է»: Իսկ լավագույնի համար, պարզաբանում էր հոդվածագիրը չպետք է լավն էլ արհամարհել: Հարկավոր է չանտեսել կովկասահային էլ, վանեցուն ու մշեցուն էլ, ամենախուլ անկյունում կռվող անզեն և անօգնական հային էլ, կիլիկիացուն էլ, արտասահմանի հային էլ և ամեն ինչ զոհաբերել նրանց համար: Պետք չի անտեսել, շարունակում է հոդվածագիրը, նաև հանրային կարծիք ձևավորողին, դիվանագետին, դաշնակցականին, հնչակյանին, վերակազմյալին, ռամկավարին, անկուսակցականին ու չէզոքին: Վերջապես յուրաքանչյուր հայի, որը ջանում է օգտակար լինել ազգին: Թեև հրապարակագրի աշխատանքի մի կարևոր մասն էլ քննադատությունն է, գրում է Մ. Տամատյանը, սակայն ինքն անհրաժեշտ չի համարում իր «խօսքերուն թոյն խառնել»[3], հորդորել, համոզել, խանդավառել և դրանով գործի կոչել:

Մ. Տամատյանը ներկայացնում է, նաև **համագործակցության մասին** իր պատկերացնումները: **Կուսակցությունների** գոյությունը և դրանցից յուրաքանչյուրի անջատ գործունեությունը նա համարում է ներելի և օգտակար: Բայց երբ ազգի գոյությունը վտանգված է, նշում է հեղինակը, կուսակցությունների առանձին և տարբեր ուղղությամբ գործունեությունը դառնում է վնասակար: Այդ պարագայում նրանք իրար ձեռք պիտի մեկնեն և համախմբելով բոլոր ուժերը, գործեն հանուն միևնույն նպատակի: Մասնավորեցնելով նա գրում է, որ «Եգիպտահայերն օրինակ այսպիսի համերաշխութեան մը տեսարան չպարզեցին»[4]: Այնուհետև վկայակոչելով Անգլիայի ուսանելի օրինակը, հեղինակը նշում է, որ պատերազմի առիթով խորհրդարան կազմելուց այնպես արվեց, որ անգամ ամենաննշան կուսակցությանն այնտեղ տեղ հատկացվեց: Նույն երևույթը տեղի ունեցավ նաև Ֆրանսիայի ու Իտալիայի խորհրդարաններում: Ռուսաստանում էլ բոլոր կուսակցությունները համախմբվեցին ցարի շուրջ: Միայն հայերը, որ այնքան փոքր և թույլ էին, համագործակցության կարիքը չզգացին և համառորեն կառչած մնացին «կուսակցական պիտակներուն»[5]:

---

[1] Տե՛ս նույն տեղում:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Տե՛ս նույն տեղում:
[4] Տե՛ս «թերթ, 7 հունիսի, 1915, թիվ 13:
[5] Տե՛ս նույն տեղում:

Այնինչ, գրում է Մ. Տամատյանը, մենք էլ պիտի համախմբվենք Կաթողիկոսի կամ Ազգային պատվիրակության շուրջ: Փառքի դափնին իրար ձեռքից խլելու փոխարեն հայ կուսակցությունները պետք է կատարյալ համերաշխությամբ համագործակցեն: Իսկ համագործակցության պայմաններն են փոխադարձ հարգանքը, հաշտարար ոգին, լայնախոհությունը և եղբայրական վերաբերմունքը կուսակցությունների միջև, անսխալական լինելու, կուսակցամոլության և մոլեռանդ այլամերժության փոխարեն:

Անդրադառնալով 1917թ. նոյեմբերի 4-ին Փարիզում է տեղի ունեցած միջկուսակցական համերաշխության ժողովին, Մ. Տամատյանն ընդգծում է, որը դա նախաքայլ էր ազգային միություն ստեղծելու և **միջկուսակցական համերաշխության** ճանապարհին[1]: Ելույթ ունեցողներ Մ. Վարանդյանի, Ա. Հանըմյանի (ՀՅԴ), Գուրգեն Թահմազյանի (ՍԴՀԿ) և իր խոսքը, Մ. Տամատյանը գրում է, որ կուսակցություններն առժամանակ գաղափարախոսական ներհակություններն անտեսելով և մոռանալով անցյալում եղած հակասությունները, եղբայրական ձեռք են մեկնել միմյանց: Այդ հենքի վրա էլ, ազգի բոլոր հատվածների և հոսանքների միջև համաձայնություն կայացավ ու կազմվեց Հայ ազգային միությունը:

Միտինգներն ու ցույցերը եգիպտահայերի ազգային կյանքում սովորական են դարձել գրում է Մ. Տամատյանը «Մեծ դատը» հոդվածում[2]: Բայց դրանք հաճախ միմյանց դեմ են ուղղված լինում: Սակայն երբ Ալեքսանդրիայի հայությունը նշում էր հայ կամավորների և նահատակների հիշատակը, աննախադեպ շատ մարդ էր հավաքվել: Մեծարվում էին, նկարագրում է հեղինակը, Վանի քաջերը, կամավորները, նահատակները: Խրիմյան Հայրիկի և Ալիշանի հետ ոգեկոչվում էին Պետոն, Մարտիկը, Ավետիսյանը, Սեպուհը, Անդրանիկը, Համազասպը և շատ ուրիներ. «Ազգին ամբողջութեան հետ ապրելու, շնչելու անապակ քաղցրութիւնը զգացինք գո՛նէ օր մը: Համերաշխութեան, միաբանութեան վայելքը ըմբոշխնեցինք..»[3], հիացած գրում է Մ. Տամատյանը, ապա եզրակացնում՝ այս մեծ դասը սովորեցրեց բոլորին ազգի հետ և ազգի համար միասին գործելու առավելությունը:

Նույն Եգիպտոսում հայերը նաև կռիվ էին հայտարարել իրար դեմ, անթաքույց զայրույթով գրում է Մ. Տամատյանը, այնինչ պիտի կարողանային դժվար պահերին մոռանալ ճղճիմ հաշիվներն ու սին հավակնությունները և համախմբվել միևնույն գաղափարի շուրջ: Ազգի սրտացավ զավակները պետք է ցած իջնեն պատվանդաններից, գրում է հոդվածագիրը և շատ ավելի օգտակար կլինեն ազգին, եթե միախառնվեն ու նույնա-

[1] Տե՛ս «Արև» թերթ, 9 հունվարի, 1918, թիվ 105 (415):
[2] Տե՛ս «Արև» թերթ, 18 հունիսի, 1915, թիվ 18:
[3] Տե՛ս նույն տեղում:

նան նրան: Ազգի հարուստները, որոնք հիվանդանոց, դպրոց, եկեղեցի են շինում, այսուհետև պիտի ազգի տունը կառուցեն: Հայ մտավորականները պետք է ոգևորեն, ոտքի հանեն ժողովրդին: Երիտասարդները՝ մտահոգվեն ազգի ապագայով, հասարակ աշխատաորը ազատամարտին նվիրաբերի իր ողջ ունեցածը:

Անդրադառնալով **կամավորական շարժմանը** Մ. Տամատյանը նշում է, որ այն ունի երկու միմյանց փոխպայմանավորող՝ ներքին ազգային և արտաքին-քաղաքական ասպեկտներ: Խնդիրն այն է, գրում է նա, թե հայերը միասնական ծրագիր ունե՞ն և դրա շուրջ կա՞ համաձայնություն: Եթե չկա, նշում է հեղինակը, ապա «միեւնոյն կամաւորական խումբը ոմանք դէպի աջ պիտի ուզեն քաշել, ոմանք դէպի ձախ»[1]: Ամերիկայում օրինակ, գրում է հոդվածագիրը, չորս հայկական կուսակցություններ են գործում և դրանցից յուրաքանչյուրը հազարավոր անդամներ ունի, մի քանի հարյուր կամավոր միայն կարողացան ուղարկել: Եվ ցավալին այն էր, որ <<Ամերիկայէն գացող կամաւորները ամերիկահայութեան կամաւորները չէին, այլ Դաշնակցական, Հնչակեան-Ռամկավար կամաւորներ էին>>[2]: Հայտարարել, որ կամավորական խնդիր ասելով ազգային գործունեության ընդհանուր ծրագիր պիտի հասկանալ, նշանակում է առկա է կուսակցական համերաշխություն և ազգային համագործակցություն, գրում է Մ. Տամատյանը, ապա շեշտում, որ քանի այդ ցանկալի և անհրաժեշտ պայմանը իրականություն չի դարձել, միայն խմբակցություններ կան:

Ազգային հարցում Մ. Տամատյանը կարևորում էր նաև մամուլի դերը. «քանի դեռ լրջօրէն չառնուի մամուլին դերը, անկարելի կը դառնայ առողջ հանրային կարծիք մը առաջ բերել»[3]: Թուրքերի գործած աննախնթաց բարբարոսությունների հանդեպ հայ միտքն արթնացավ, գրում է հեղինակը, գուցե շնորհիվ նաև մամուլի: Բայց երբ հանրային խնդիրները խիստ կևևոր են դառնում, երբ եղելությունները գահավիժում են, երբ ամենակենսական և անհետաձգելի իրողությունները խնդրո առարկա են դառնում, մամուլը չի կարողանա օգտակար դերը կատարել, եթե ընթերցողները շարունակեն անտարբեր մնալ դրա հրապարակումներին:

«Կուսակցութիւն մը, գրում է Մ. Տամատյանը, որքան ալ զօրաւոր ըլլայ կամ կարծէ թէ է, չի կրնար մեր մէջ օգտակար ըլլալ, արդիւնաւոր դեր մը կատարել, եթէ ինքնիրենը, առանձին գործ է»[4]: Հետևաբար, միակ միջոցը ոչ կուսակցականներին իր հետևից տանելն է: Ժողովուրդը մի քիչ դժվար հասկացող, խառնիճաղանջ խումբ է, որին մեծ դժվարությամբ է

[1] Տե՛ս նույն տեղում:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Տե՛ս «Արև» թերթ, 30 հուլիսի, 1915, թիվ 30:
[4] Տե՛ս «Արև» թերթ, 16 օգոստոսի, 1915, թիվ 43:

հնարավոր ոգևորել: Այդ պատճառով ամեն անգամ, երբ մեր կուսակցություններն զգացել են համերաշխության անհրաժեշտությունը, կարողացել են ժողովրդին իրենց հետևից տանել և շատ թե քիչ արդյունավետ գործ կատարել: Եվ ամեն անգամ, երբ առանձին-առանձին են գործել, կամ ձախողվել են, կամ մերժվել հենց այն մասի կողմից, որը քայլում էր նրա հետևից: Եվ դա այն պարզ պատճառով, պարզաբանում է ասելիքը Մ. Տամատյանը, որ խորքային իմաստով քաղաքական կուսակցություններ չենք ունեցել: Ընդհակառակը, քաջ իմանալով ժողովրդի հոգեբանությունը, դրանք հարցերը ներկայացրել են ամենապարզ տարբերակներով, հուսալով, որ դրանով ժողովրդին կմղեն եռանդուն գործունեության: Իսկ երբ ոմանք շրջահայաց մտահոգություններ ու արդարացի վերապահություններ են ներկայացրել, դա որակել են իբրև չկամություն և անպարտաճանաչություն:

Մ. Տամատյանն ակնդետ հետևում էր տարբեր երկրներում հայ և օտար լեզուներով հայեցի դիմագիծ ունեցող պարբերականներում լույս տեսնող այն հրապարակումներին, որոնք արդիական և հրատապ թեմաներ էին շոշափում և այս կամ այն չափով քննարկում Հայկական հարցը: Այդ շարքից է նաև «Լռելը ոսկի է» հոդվածը[1]: Չհասկանալով, որ Հայոց եղեռնը պետականորեն որոշված ծրագիր էր, գրում է Մ. Տամատյանը, որոշ հայ մտավորականներ փորձում էին այդ ոճիրի համար հազար ու մի արհեստական պատճառաբանություններով, չգիտակցված, երբեմն էլ չուզենալով՝ արդարացնել թուրքերին: Իհարկե, գրում է Մ. Տամատյանը, նրանք ազատ են իրենց կարծիքն ունենալու, սակայն իրավունք չունեն պատասխանատվությունը հայ հեղափոխությանը վերագրել և թշնամիների ձեռքը մեր դեմ զենք տալ, «թուրք կառաւարութեան «մեղմ», «չափաւոր», «հայասէր» ու «համբերատար» քաղաքականութեան վրայ հիանալ»: Անցյալն իր ողջ ծանրությամբ ազգի ուսերին վերցնելու քաջությունը պետք է ունենալ և տվյալ պահին «միակ արժանավայել դիրք մը որդեգրել – լռութի՛ւն»[2]:

«Լռելը ոսկի է» վերնագրով մեկ այլ հրապարակման մեջ էլ Մ. Տամատյանը քննադատելով «ծայրէ ծայր Հնչակեան կուսակցութիւնը պանծացնելու փափաքէն ներշնչուած»[3] Հ. Թյուրապետյանի հոդվածը, նշում է, որ թեև Կովկասում հնչակյաններն առաջնակարգ դերակատարություն են ունեցել, բայց դաշնակցության չափ չեն հզորացել, քանի որ «իր ընկերվարական ծրագիրը յարմար չէր գար հայ հարուստներուն որոնք աւելի համակիր էին ազգայնական կռուանի վրայ գործելու»[4]: Մյուս կողմից, պար-

[1] Տե՛ս «Արև» թերթ, 15 սեպտեմբերի, 1916, թիվ 59 (215):
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Տե՛ս «Արև» թերթ, 17 սեպտեմբերի, 1916, թիվ 60 (216):
[4] Տե՛ս նույն տեղում:

զաբանում էր Մ. Տամատյանը, կուսակցության ծրագիրը ծանրաբեռնված էր միջազգային ընկերվարական այնպիսի պահանջներով, որոնք եվրոպացի սոցիալիստների աչքին անգամ ծայրահեղ էին թվում այնպիսի երկրի համար, «ուր ազգայնութեանց պայքարը կը նսեմացնէ դասակարգային կռիւին դեռ հազիւ զգալի գոյութիւնը»[1]:

Հղում անելով հնչակյան տեսաբանին, Մ. Տամատյանը գրում է, որ առանձին հեղափոխություն իրականացնելու գաղափարից հրաժարված՝ Հնչակյան կուսակցությունն սկսեց նախապատրաստվել ընդհանուր ապստամբության, իսկ մյուս կուսակցություններն աղետաբեր գործունեություն ծավալեցին, «կոտորածներու տեղի տուին… և անուղղակի պատճառ դարձան հայ-թաթարական կռիւներուն…»[2]: Հնչակյան տեսաբանը շեշտում էր նաև, որ իրենք պանիսլամիզմի դեմ էին ծառացել, ինքնավար Հայաստան էին պահանջում և որպես «Արեւելքի մէջ ընկերվարութեան դրօշակակիր՝ ամէն շարժման առաջին ճակատին կը գտնուին եղեր»[3]: Մ. Տամատյանը նշում է, որ հնչակյանների գաղափարախոսը ծայրահեղություններ է թույլ տալիս ինչպես վերոնշյալ հարցերում, այնպես էլ երբ քննադատում է Ազգային պատվիրակությանն ու դրա դիվանագիտական լեզվից շատ հեռու բառապաշարը:

Հայ ազգային-ազատագրական պայքարի նվիրյալ Մ. Տամատյանը նաև մեծ մարդասեր էր: Պատահական չի, որ անկախ քաղաքական համոզմունքներից, հայ հասարակության մեջ ունեցած դիրքից և կուսակցական պատկանելությունից, նրա համար թանկ էին ու ամենայն հարգանքի արժանի գրեթե բոլոր գործիչները: Նույն կերպ ինքն էր սիրված ու ընդունելի բոլորի համար: Նրա հրապարակախոսության մեջ առանձնակի տեղ էր գրավում ազատագրական պայքարի ռահվիրաների օրինակով սերունդներ դաստիարակելու ձգտումը: Այդպիսի հրապարակում էր Մ. Փորթուգալյանի[4] մահվան առիթով գրված նրա գնահատանքի խոսք-հոդվածը:

«Յանձին Մ. Փորթուգալեանի, գրում է Մ. Տամատյանը, կ՛անհետանայ բազմավաստակ հայ վէթէրան մը, հայ գրողի, ուսուցչի, հրապարակագրի ու գործիչի հանրածանօթ և ամենէն յարգուած դէմք մը»[5]: Ազգային գործչի և մեծ հայրենասերի գործունեությունն ավելի բեղմնավոր եղավ

[1] Տե՛ս «Արև» թերթ, 19 սեպտեմբերի, 1916, թիվ 61 (217):

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Մկրտիչ Փորթուգալյանի և նրա «Արմենիա» թերթի մասին մանրամասն տե՛ս Սարգսյան Ս., «Արմենիա» պարբերականը ազատագրական գաղափարախոսության ակունքներում», Ե., 2014, (680 էջ) և նույնի՝ «Մկրտիչ Փորթուգալյանի հասարակական-քաղաքական կյանքը և «Արմենիա» պարբերականը, Ե., 2018, (493 էջ) ծավալուն աշխատությունները:

[5] Տե՛ս «Արև» թերթ, 3 հոկտեմբերի, 1921, թիվ 65 (976):

Վանում, որտեղ մի քանի սերունդներ դաստիարակեց, ներկայացնում է Մ. Տամատյանը, նրանց ներշնչելով ազատության ոգին և հեղափոխության գաղափարը[1]: Նա եղավ գաղափարի սերմնացանը, իսկ իր սաները հիմնեցին հայ իրականության մեջ առաջին և միակ երկրածին Արմենական կուսակցությունը: Մ. Փորթուգալյանը, «գործօն յեղափոխական մը չեղաւ, այլ ներկայացուց այն սերունդը որ **միացման կամուրջ մը կամ փոխանցման գիծ մը եղաւ** ընդմէջ **Ազգային Սահմանադրութիւնը դարբնող** և արդիւնաւէտող Օտեաններու, Ռուբինեաններու և Սէրվիշէններու սերունդին **և որուն գործօն յեղափոխականներու սերունդին**»[2]: 1885-ին Մարսելում հիմնեց «Արմենիա» լրագիրը, որը «հայ կեանքին մէջ նոր անկիւնադարձ մըն էր»[3]: Այնպես որ, գրում է Մ. Տամատյանը, Փորթուգալյանը «կը հեռանայ իր դերը լիովին կատարած, մինչև վերջը մնալով գաղափարի պատնէշին վրայ»[4]:

«Արևի» էջերում Մ. Տամատյանի հեղինակած հոդվածներ էլի կան, սակայն դրանք հրապարակախոսության տեսանկյունից մեծ արժեք չեն ներկայացնում: Այդ պատճառով էլ դրանց չենք անդրադարձել: Այսպիսով՝

1. Մ. Տամատյանը կրթալուսավորական, ֆիդայական, գաղափարաքարոզչական և կուսակցական գործիչ լինելուն զուգընթաց «Արև» թերթում հեղինակել է մեծ թվով հրապարակախոսական հոդվածներ:

2. Դրանք թեև երբեմն պարզ են, աչքի են ընկնում հարցերին ոչ խորքային մոտեցումներով, քաղաքագիտության ու հրապարակախոսության տեսանկյունից կաղում են, սակայն անկեղծ են, համարձակ ու յուրակերպ մարտահրավեր են ընդդեմ օտարի տիրապետության և լավագույնս նպաստում են հայության շրջանում պայքարի ոգի ներարկելու կարևոր գործին:

3. Այդ հոդվածներում հայության թշնամիների դեմ անթաքույց կոչհորդոր կա, սեր՝ տարաբախտ հայրենիքի և որոշակի լավատեսություն ապագայի նկատմամբ:

4. Մ. Տամատյանի հրապարակախոսությունը բազմավեկտոր է. Հայկական հարց, ազատագրական պայքար, կուսակցությունների միասնություն, գաղթաշխարհի, վերաբերմունք Ազգային պատվիրակության, կամավորական շարժման նկատմամբ և այլն:

---

[1] Ժամանակի մամուլում, հետո էլ հուշագրական գրականության մեջ հայ ազգային-ազատագրական պայքարն անվանվեց «հեղափոխություն» և այդ ձևով էլ շարունակվեց անվանվել մասնագիտական գրականության մեջ: Իրականում այն դասական իմաստով հեղափոխություն չէր:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Տե՛ս նույն տեղում:

Сурен Саргсян, Публицистика Миграна Таматяна - В конце 19-го и начале 20-го веков сверхзадачей армянского народа являлось освобождение от турецкого господства. Преодолевая множество препятствий, революционное поколение ринулось в поле борьбы для решения этой проблемы. Один из представителей этой революционной когорты, общественно-политический и партийный деятель, писатель, переводчик и педагог Мигран Таматян всю свою сознательную жизнь посвятил делу освобождения своего народа от оков турецкой тирании.

Своей организационно-пропагандистской деятельностью, а при необходимости прибегнув к вооруженной борьбе, он часто обращался также к помощи пера. В этой, ускользнувшей от внимания исследователей, сфере, своими смелыми и содержательными аналитическими работами М. Таматян во многом способствовал делу борьбы за освобождение от тирании, против эксплуатации народа буржуазией и привносил свой вклад в сохранение армянского народа. Ярким свидетельством сказанному являются публицистические статьи М. Таматяна в египетской армяноязычной газете “Арев”.

Syren Sarksyan, Tamatiana Migrana Publication - At the end of the 19th century and at the beginning of the 20th century, the supreme task of the Armenian people was to be liberated from the Turkish dominance. Overcoming many obstacles, the revolutionary generation entered the battlefield to settle the issue. Representative of that heroic phalanx was Mihran Tamatian who was a public, political and party figure, a writer, a translator and an educator who devoted his entire conscious life to the liberation of his own people from the clutches of Turkish violence.

As a preacher and an organizer, and in ca se of necessity, as a weapon fighter, Mihran Tamatian often resorted to the aid of a pen as a pen-fighter. In the community of scholars who paid less attention to this issues, M. Tamatian was the best contributor to liberation from dictatorship and the struggle against the exploitation and oppression of the rich through his bold and comprehensive analysis, and contributed to the national cause of preserving the Armenian identity. Tamatian's publicist articles published in Egyptian-Armenian "Arev" newspaper stand as a vivid proof of the above stated.